

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
13 սեպտեմբերի 2019 թ. թիվ 138 նիստում
Ավարգայան



**ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

ԳԿՄԿ (այսուհետ՝ Կենտրոն) ֆինանսական պլանավորման և կառավարման քաղաքականության հիմնական նպատակը՝ Կենտրոնի ֆինանսական հոսքերի արդյունավետ բաշխումն է՝ գործունեության ռազմավարական նպատակների իրագործման և կրթության որակի ապահովման գծով միջոցառումների ապահովմանը համապատասխան:

Ֆինանսական պլանավորման և կառավարման քաղաքականությունն իրենից ներկայացնում է ֆինանսական հարաբերությունների կազմակերպման ոլորտում միջոցառումների համալիր՝ Կենտրոնի ծախսերի կառավարումից արդյունքների կառավարմանն անցնելու գործառույթների և խնդիրների իրագործման նպատակով:

1. Ֆինանսական պլանավորման և կառավարման քաղաքականության սկզբունքները

1.1. Կենտրոնի ֆինանսական պլանավորման և կառավարման քաղաքականությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- Կենտրոնի հետ գործակցող բոլոր շահագրգիռ կողմերի բավարվածության,
- Կենտրոնի գործունեության արդյունքների արդյունավետ կառավարման,
- Կենտրոնի ֆինանսական կայունության, որակական ցուցիչային ռազմավարական պլանավորման, որը թույլ կտա հիմնավոր կերպով ձևավորել նպատակային կողմնորոշիչներ և ակնկալվող արդյունքների ցուցանիշներ,
- Ֆինանսական վերահսկողության:

2. Կենտրոնի ֆինասական պլանավորման և կառավարման քաղաքականության նպատակները

2.1. Կենտրոնի ֆինանսական քաղաքականության նպատակներն են.

- Գործող օրենսդրության համապատասխան՝ Կենտրոնի միասնական ֆինանսական քաղաքականության իրականացում,
- Ֆինանսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում՝ միտված Կենտրոնի գործունեության ռազմավարական և մարտավարական նպատակների իրագործմանը, ինչպես նաև որակի ապահովման ներբուհական համակարգի արդյունավետ գործունեությանը,
- Կենտրոնի ֆինանսական կայունության ապահովում,
- Կենտրոնի կառավարման արդյունավետ մեխանիզմի ձևավորում:

3. Կենտրոնի ֆինասական պլանավորման և կառավարման քաղաքականության խնդիրները

3.1 Ֆինանսական քաղաքականության խնդիրներն են.

- Տարեկան միջոցառումների ծրագրի կազմում,
- Տարեկան միջոցառումների ծրագրի հիման վրա բյուջեի տարեկան ծրագրի պլանավորում,
- Ֆինանսական պանավորում և համապատասխան միջոցառումների իրականացում՝ պլանային, բյուջետային և արտաբյուջետային քաղաքականության պահպանման ուղղությամբ՝ Կենտրոնի ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով,
- Կենտրոնի գործունեության արդյունքների հաշվառում և վերլուծություն:
- Բյուջեի տարեկան ծրագրի առանձին տողերի հիմնավորումների ապահովում:

4. Կենտրոնի ֆինանսական միջոցների բաշխման մեխանիզմի նկարագիրը

4.1 Բյուջեի տարեկան ծրագրի հանգամանալից նկարագրությունը և բյուջեի համապատասխան հոդվածների պատշաճ հիմնավորվածությունը դիտարկվում է որպես կարևոր գործոն՝ Կենտրոնի թափանցիկության և արդյունավետ կառավարման տեսանկյունից:

4.2 Աշխատավարձին առնչվող ծախսերը (հիմնական աշխատավարձ, արտաժամյա աշխատանքի վճարներ, հավելավճարներ, պարգևավճարներ, արձակուրդային գումարներ, և այլն) մասհանվում են ըստ հաստիքացուցակի և մարդկային ռեսուրսների քաղաքականությամբ սահմանված գործիքների (հավելավճարներ, աշխատավարձի սանդղակ, սոցիալական փաթեթներ և այլն):

4.3 Աշխատավարձի հետ առնչություն չունեցող ծախսերի մասով անհրաժեշտ է կազմել համապատասխան նկարագրություններ (բացատրություններ). հաշվի առնելով այս ծախսերի բնույթը: Այս դեպքում կարող են պահանջվել նաև հատուկ ծրագրահեն մոտեցումներ:

4.4 Յուրաքանչյուր տարվա բյուջեի մեջ առանձին հոդվածով կրթության որակի բարելավման միջոցառումների գծով հատկացումների նախատեսում՝ առնվազն պլանավորված ընդհանուր ծախսերի 2 տոկոսի չափով:

4.5. Յուրաքանչյուր տարվա բյուջեի մեջ առանձին հոդվածով առողջության և անվտանգության պահպանման գծով հատկացումների նախատեսում:

4.6 Բյուջեի մանրամասն բացվածքը նախանշվում է որպես կարևոր չափանիշ, իսկ որպես բյուջեի հատուկ հոդվածի առավելագույն շեմ՝ ընտրվում է ոչ աշխատավարձային ընդհանուր ծախսերի 3%-ը: 3%-ի գերազանցմամբ հոդվածների դեպքում անհրաժեշտ է դրա հետագա բաշխում՝ ըստ ենթահոդվածների:

4.7 Բյուջեի հոդվածների հիմնավորումը կարևոր չափանիշ է և դրսևորվում է ինչպես գործունեության նկարագրություններով (գործունեությունը սահմանված է Գործունեության տարեկան ծրագրով, որում, ի թիվս այլ փաստաթղթերի, արտացոլված են ռազմավարական (երկարաժամկետ) ծրագրերը), այնպես էլ համապատասխան հաշվարկներով (օրինակ՝ սարքավորման դեպքում դա կարող է լինել անվանումը, սարքավորման հիմնական տեխնիկական պարամետրերը, ակնկալվող քանակը և մեկ միավորի գինը):

4.8 Նախորդ տարվա փաստացի ծախսերը կարող են օգտագործվել որպես հիմնավորումներ՝ ընթացիկ տարվա բյուջեի միայն հատուկ հոդվածների, ներառյալ չնախատեսված ծախսերի դեպքում: Բյուջեի եկամտի հոդվածների հիմնավորման համար պահանջվում են որոշ ծրագրված կամ կանխատեսող նախահաշիվների կազմում, որոնք պետք է քննարկվեն Կենտրոնի ղեկավարության կողմից և նկարագրվեն գործողությունների տարեկան պլանում կամ համապատասխան այլ փաստաթղթերում: Բյուջեի հիմնավորումները ներկայացվում են բյուջեի հիմնական փաստաթղթի հետ միասին:

4.9 Կենտրոնի հաշվետվողականության համապատասխան համակարգը սերտորեն կապված է պլանավորման փաստաթղթերի հետ և, ըստ այդմ, Ռազմավարական (երկարաժամկետ) զարգացման ծրագրերի, Գործունեության տարեկան ծրագրի և Տարեկան բյուջեի կատարման հաշվետվություններն ապահովում են շրջանակ՝ ընդհանուր մշտադիտարկման և գնահատման համար: Բյուջեի հոդվածների հիմնավորման հիման վրա կարելի է ներկայացնել ծախսերի մասով հաշվետվություն՝ ապահովելով պատշաճ, մանրակրկիտ դասակարգում, որում արտացոլված կլինեն Գործունեության տարեկան պլանի իրագործման հաշվետվության համապատասխան բաժինները: